

Լճագային եկեղեցական հանդէսներու մէջ մեծ և ուրախաւիթը իբրեւ միակ միջնարդութիւն ազգի՝ եղածէ միշտ Լճագիս լիթուղիկոսաց օծութեան հանդէսը երբ համաղգային ընտրութեամբ արժանաւոր և բարձրաստիճան հոգեւորականք կ'ամբառնան օծութեամբ սուրբ հոգւոյն լընդհանրական կաթուղիկոսութիւն ամենայն հայոց, վարել հոգեւոր իշխանութիւն Լճգիս ՚ի փոխանորդութիւն Լուսաբեւական յաջորդութեան նախալուսաւորչացն մերոց սրբոց Խաղաղէոսի և Բարդուղիմէոսի և յարժանաժառանգ գահակալութիւն հայրապետական իշխանութեան հօրն հաւատոյ մերոյ սրբոյն Վրիգորի լուսաւորչին հայաստանեայց որով և կաթուղիկէ Մայր եկեղեցիս Լրարատեան սուրբ Լճմիածին իւր այրիութեան քողը մերկանալով, իբրեւ հարսն արդարեւ զարդու զարդարեալ, իբրեւ մայր եկեղեցեաց ևս կ'խրախանայ իւր որդւովք:

Բայց իննևտասներորդ դարուս մէջ եղած հայրապետական օծութեանց առաջին և արժանաւորն յիշատակաց վասն եկեղեցւոյ և վասն Լճգիս բարեաց՝ եղև շքեղ հանդէս օծութեան սրբազնագոյն կաթուղիկոսի ամենայն հայոց Տեառն Տեառն Վեորգայ Վի. յուրախութիւն բոլոր հայկազանց և հոգեւորական ուխտի միաբանութեանս յանցեալ 1867 ամի ՚ի 21. մայիս ամսոյ:

Լրժանի մշտնջենաւոր յիշատակաց եղաւ ապաքէն () օծութիւն մերս հոգեւոր

հովուապետի վասն հայրապետական Լթոռոյս և Սուսաստանի ազգայնոց, որ սուրին Ս. Եհափառութիւնը Եղգիս լըութենէն վերակոչուելով ՚ի Տաճկաստանէ Եղթոռ հայրապետութեան, ընդ իւր բերաւ Տաճկաստանի մեր ազգայնոց սիրտը և հոգին, և կենդանացրեց նոցա սէր և ջերմեռանդութիւնը այս համաղգային միութեան կեդրոնին վրա, որոնք ՚ի հեռուստ անտի ՚ի մի յօդ սիրոյ և միաբանութեան բարոյապէս միանալով Սուսաստանի և Պարսկաստանի իրենց եղբարց հետ, յառապրիզի ազգային յառաջադիմութեան և ՚ի պայծառութիւն սուրբ Լճմիածին իբրեւ մի հոգի և մի մարմին այսուհետեւ միապէս և միասիրտ պիտի գործեն:

Լրժանի յիշատակի՝ և վասն հոգեւորական ուխտի բոլոր միաբանութեան Ս. Լթոռոյս, որոց ոչ միայն մշտնջենաւոր բարեաց և բարեկարգութեանց առիթ եղաւ և քաջալեր ՚ի գրաւորական երկս պարապման, այլև իւր տարեւոր այցելութեամբն առ Լճգս մեր ՚ի հեռավոր քաղաքս Սուսաստանի յետ իւր օծութեն, հաստատեց զլքեալ սիրտս հասարակութեան ժողովրդոց և դարձոյց վերստին նոցա սէր և ջերմեռանդութիւնը առ սուրբ Լթոռս Լճմիածին, որոնք գրեթէ պաղած էին ՚ի միաբանութենէս անցեալ դէպքերով, և արժանի կացոյց իւր այս հոգեւոր ուխտը նոցա քաղցր ախարկութեանը, որոց յոյսը և ախկալութիւնը անտարակոյս պիտի արդիւնաւորեն յետ այ

սորիկ գործովք բարեաց արժանի իւրաքանչիւրումն հոգեւոր կոչման և աստիճանի

|| Եհափառ Հայրապետի այս արժանաւոր () ծովածեան տարեգարձն էր անհաղոր ըստ նախնի սովորութեան կատարեց հոգեւոր ուխտս փառաւոր հանդիսիւ և պաշտմամբք հոգւոյն սրբոյ գալստեան կիւրակէ օրը 'ի մէջ կաթուղիկէ սուրբ Լ. ջմիածնի 'ի 18 մայիսի ամսոյ երկու օրով յառաջ՝ յուրախութիւն բոլոր ժողովրդոց :

Գիշերային պաշտման ժամերգութեանն ետքը պատարագիչը որ Բնդրէաս Բքք եպիսկոպոսն էր, ասաց գեղեցիկ քարոզ յատենի եկեղեցւոյ ըստ պատշաճի աւուր խորհրդոյն և տարեգարձի օծման սրբազնագոյն կաթուղիկոսին 'ի մխիթարութիւն ներկայ եղեալ ժողովրդոց :

Եւս ուրախառիթ հանդիսին և եկեղեցական տօնախմբութեան շնորհացը ևս մասնակից առնելով վեհափառ Տէրը և վաղարշապատ գիւղի մնացած ժողովուրդը ուղարկեց և առ նոսա քարոզիչ զՍեւրովք շնորհախալ վարդապետ միաբան Բթողոյս, 'ի հոգեւոր մխիթարութիւն նոցա :

Իսկ առաւօտուայ երրորդ ժամէն յառաջ հոգեւոր ուխտի մաղթանքը ըստ սովորութեան կատարուեց 'ի գաւիթ կաթուղիկոսարանին յանդիման Բստուածարեալ Հայրապետին, ուր և հետեւեալ ճաւոր ընթերցաւ ուսումնարանի աշակերտներէ մէկը, 'ի խորհուրդ տարեգար

ձի սրբազան օծմանն :

|| Ուրք պատարագի աւարտմանէն վերջը արժանաւոր հացկերոյթ պատրաստուած էր Բթողոյ երկու մեծաշէն հասարակաց սեղանատանց մէջ, ուր || Եհափառ Հայրապետի Բթողոյն յաջ և յահեակ բաղմած էին 'ի ներկայութեան նորա բոլոր Բստիճանաւորք Հաշտարար դատարանին Լ. ջմիածնայ գաւառի, գաւառական դատարանին և Խնոդի սուրբ Լ. ջմիածնի, նաև յառաջակայք վաղարշապատայ՝ բոլոր միաբանութեան հետ :

Եւս հանդիսաւոր հացկերութիւն մէջ նորին վեհափառութեան հոգեսուն աշակերտ ||. ||. || անկունի սրտեռանդն ատենաբանեց մի ժամու չափ 'ի լուր հանդիսականաց, որոյ և բանախօսութիւնը կ'դնենք 'ի ներքոյ, որև աւարտելէն ետքը երբ որ ամէնքը միաբերան ընդ Բտեմաբանին գոչեցին ուրախութեամբ, իւրեցիկէ՛ կեցցէ՛ || Եհափառ Հայրապետն մեր արձակեցան հրացանք արտաբուստ, և ամէնքը անպատում բերկրութեամբ բաժակնին քամեցին վասն կենաց սրբազնագոյն կաթուղիկոսի և վասն հաստատութեան սուրբ Լ. ջմիածնի, յետ որոյ Տեղակալ սրբազան Սարգիս Բքքեպիսկոպոսն դառնալով առ || Եհափառ Տէրն՝ ասաց, "Եւս ուրախութիւն որ մերս է՝ լցեալ է" յուշ առնելով թէ երջանիկ են այն որդիքը և այն ժողովուրդը, որ հանձարաւոր գլուխ կ'ունենան, երջանկութիւն է և այնպիսի հօր՝ որոյ որդիքը հաւատարիմ

